Արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգում հիմնադրող Լոկառնոյի համաձայնագիր

Հոդված 1
Հատուկ միության հիմնումը. Միջազգային դասակարգման ընդունումը

1) Այն պետությունները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը, կազմում են Հատուկ միություն:

2) Նրանք ընդունում են արդյունաբերական նմուշների միասնական դասակարգումը (այսուհետ՝ միջազգային դասակարգում):

3) Միջազգային դասակարգումն ընդգրկում է.

(i) դասերի և ենթադասերի ցանկը,

(ii) ապրանքների այբբենական ցանկը, որում միավորված են արդյունաբերական նմուշները, այն դասերի և ենթադասերի նշումով, որոնց մեջ դրանք ընդգրկված են,

(iii) բացատրական ծանոթագրությունները:

4) Դասերի և ենթադասերի ցանկ է հանդիսանում սույն Համաձայնագրին կցված ցանկը, որը ենթակա է այնպիսի փոփոխությունների և լրացումների, որոնք 3-րդ հոդվածով սահմանված Փորձագետների կոմիտեն (այսուհետ՝ Փորձագետների կոմիտե) կարող է կատարել դրանում:

5) Ապրանքների այբբենական ցանկը և բացատրական ծանոթագրությունները պետք է ընդունվեն Փորձագետների կոմիտեի կողմից՝ 3-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

6) Միջազգային դասակարգումը կարող է փոփոխվել կամ լրացվել Փորձագետների կոմիտեի կողմից՝ 3-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

7) ա) Միջազգային դասակարգումը պետք է հաստատվի անգլերենով և ֆրանսերենով:

բ) Միջազգային դասակարգման պաշտոնական տեքստերը այլ լեզուներով, որոնք կարող է նշանակել 5-րդ հոդվածում հիշատակված Վեհաժողովը, պետք է հաստատվեն Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրող Կոնվենցիայում նշված Մտավոր սեփականության միջազգային բյուրոյի (այսուհետ Միջազգային բյուրո) կողմից՝ շահագրգիռ կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո:

Հոդված 2
Միջազգային դասակարգման օգտագործումը և դրա իրավական նշանակությունը

1) Սույն Համաձայնագրով սահմանված պահանջներից ելնելով՝ միջազգային դասակարգումը կրում է բացառապես վարչական բնույթ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր երկիր կարող է դրան վերագրել այն իրավական բնույթը, որն ինքը հարմար է համարում: Մասնավորապես, միջազգային դասակարգումը չպետք է պարտավորեցնի Հատուկ միության երկրներին այդ երկրներում պահպանություն ստացած արդյունաբերական նմուշներին տրված պահպանության բնույթի և շրջանակների առումով:

2) Հատուկ միության յուրաքանչյուր պետություն իրավունք է վերապահում միջազգային դասակարգումն օգտագործել որպես հիմնական կամ լրացուցիչ համակարգ:

3) Հատուկ միության երկրների գերատեսչությունները նմուշն ի պահ հանձնելու կամ գրանցելու պաշտոնական փաստաթղթերում և, եթե դրանք պաշտոնապես հրապարակված են, այդ հրապարակումներում պետք է նշեն միջազգային դասակարգման այն դասերի և ենթադասերի համարները, որոնց պատկանում են իրենց մեջ նմուշներն ընդգրկող ապրանքները:

4) Ապրանքների այբբենական ցանկում ներգրավելու համար անվանումներն ընտրելիս Փորձագետների կոմիտեն պետք է ցուցաբերի բավականաչափ ուշադրություն՝ բացառիկ իրավունքներ պարունակող անվանումների օգտագործումից խուսափելու համար: Այնուամենայնիվ, որևէ անվանման այբբենական ցանկի մեջ ընդգրկված լինելը չի կարող մեկնաբանվել որպես դրա

բացառիկ իրավունքների օբյեկտ լինելու կամ չլինելու վերաբերյալ Փորձագետների կոմիտեի կարծիք։

Հոդված 3
Փորձագետների կոմիտե

1) Փորձագետների կոմիտեին պետք է հանձնարարվեն 1-ին հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված խնդիրները։ Հատուկ միության յուրաքանչյուր երկիր պետք է ներկայացված լինի Փորձագետների կոմիտեում, որը կազմակերպվում է ներկայացված պետությունների պարզ մեծամասնության կողմից ընդունված ընթացակարգի կանոնների համաձայն։

2) Փորձագետների կոմիտեն այբբենական ցանկը և բացատրական ծանոթագրությունները պետք է ընդունի Հատուկ միության երկրների ձայների պարզ մեծամասնությամբ։

3) Միջազգային դասակարգման մեջ փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները կարող են ներկայացվել Հատուկ միության ցանկացած պետության գերատեսչության կամ Միջազգային բյուրոյի կողմից։ Գերատեսչության կողմից ներկայացվող ցանկացած փոփոխություն այդ գերատեսչության կողմից պետք է հաղորդվի Միջազգային բյուրոյին։ Գերատեսչություններից և Միջազգային բյուրոյից ստացված առաջարկությունները վերջինիս կողմից պետք է փոխանցվեն Փորձագետների կոմիտեին ոչ ուշ, քան երկու ամիս մինչև Փորձագետների կոմիտեի նստաշրջանի մեկնարկը, որտեղ վերոհիշյալ առաջարկությունները պետք է քննարկվեն։

4) Միջազգային դասակարգման մեջ փոփոխությունների կամ լրացումների ընդունման վերաբերյալ Փորձագետների կոմիտեի որոշումները պետք է կայացվեն Հատուկ միության երկրների պարզ մեծամասնությամբ։ Այնուամենայնիվ, եթե այդ որոշումը հանգեցնում է նոր դասի ստեղծման կամ ապրանքների՝ մի դասից մյուսը տեղափոխվելուն, պահանջվում է միաձայն ընդունված որոշում։

5) Յուրաքանչյուր փորձագետ պետք է ունենա փոստով քվեարկելու իրավունք։

6) Եթե որևէ երկիր Փորձագետների կոմիտեի տվյալ նիստում ներկայացուցիչ չի նշանակում, կամ եթե նշանակված փորձագետը նիստի կամ Փորձագետների կոմիտեի ընթացակարգերի կանոններին համապատասխան նշանակված ժամանակաշրջանում չի քվեարկում, ապա պետք է համարվի, որ տվյալ երկիրն ընդունել է Կոմիտեի որոշումը։

Հոդված 4
Դասակարգման և դրա փոփոխությունների ու լրացումների մասին ծանուցումը և հրապարակումը

1) Փորձագետների կոմիտեի կողմից ընդունված ապրանքների այբբենական ցանկը և բացատրական ծանոթագրությունները, ինչպես նաև Կոմիտեի որոշմամբ Միջազգային դասակարգման ցանկացած փոփոխության կամ լրացման մասին Միջազգային բյուրոյի կողմից պետք է ծանուցվի Հատուկ միության երկրների գերատեսչություններին։ Փորձագետների կոմիտեի որոշումները պետք է ուժի մեջ մտնեն հաղորդագրությունը ստանալուց անմիջապես հետո։ Այնուամենայնիվ, եթե այդպիսի որոշումները հանգեցնում են նոր դասի ստեղծման կամ ապրանքների՝ մի դասից մյուսը տեղափոխվելուն, դրանք պետք է ուժի մեջ մտնեն վերոհիշյալ հաղորդագրությունից հետո՝ վեցամսյա ժամկետում։

2) Միջազգային բյուրոն, որպես միջազգային դասակարգման ավանդապահ, պետք է դրա մեջ ներգրավի ուժի մեջ մտած փոփոխություններն ու լրացումները։ Փոփոխությունների և լրացումների մասին հայտարարությունները պետք է հրապարակվեն Վեհաժողովի կողմից նշված պարբերա-կաններում։

Հոդված 5
Հատուկ միության վեհաժողով

1) ա) Հատուկ միությունը պետք է ունենա Վեհաժողով, որը պետք է բաղկացած լինի Հատուկ միության երկրներից։

բ) Հատուկ միության յուրաքանչյուր երկրի կառավարություն պետք է ներկայացված լինի մեկ պատվիրակով, որին կարող են օգնել փոխարինող պատվիրակները, խորհրդատուները և փորձագետները։

գ) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը պետք է հոգա դրանց նշանակած կառավարությունը։

2) ա) 3-րդ հոդվածի դրույթների պահպանման պայմանով՝ Վեհաժողովը պետք է.

(i) զբաղվի Հատուկ միության ստեղծման ու զարգացման՝ սույն Համաձայնագրի կիրառմանը վերաբերող բոլոր հարցերով,

(ii) ուղղություն տա Միջազգային բյուրոյին վերանայման խորհրդաժողովների նախապատրաստման վերաբերյալ,

(iii) քննարկի և հաստատի Կազմակերպության Գլխավոր տնօրենի (այսուհետ՝ Գլխավոր տնօրեն)՝ Հատուկ միությանը վերաբերող հաշվետվությունները և գործունեությունը և Հատուկ միության իրավասությունների մեջ մտնող հարցերով նրան տա բոլոր անհրաժեշտ հրահանգները,

(iv) որոշի ծրագիրը և հաստատի Հատուկ միության երկամյա բյուջեն ու հաստատի նրա ֆինանսական հաշվետվությունները,

(v) ընդունի Հատուկ միության ֆինանսական կանոնակարգերը,

(vi) որոշումներ կայացնի միջազգային դասակարգման՝ անգլերենից և ֆրանսերենից բացի՝ այլ լեզուներով պաշտոնական տեքստերի հաստատման վերաբերյալ,

(vii) ի լրումն 3-րդ հոդվածով սահմանված Փորձագետների կոմիտեի՝ ստեղծի փորձագետների այնպիսի այլ կոմիտեներ և աշխատանքային խմբեր, որոնք անհրաժեշտ է համարում Հատուկ միության նպատակների իրականացման համար,

(viii) որոշի, թե Հատուկ միության անդամ չհանդիսացող որ պետություններին և որ միջկառավարական ու միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին պետք է թույլատրվի դիտորդի կարգավիճակով մասնակցել իր հանդիպումներին,

(ix) ընդունի 5-8-րդ հոդվածների փոփոխությունները,

(x) ձեռնարկի ցանկացած այլ համապատասխան գործողություն, որը նախատեսված է Հատուկ միության նպատակներին աջակցելու համար,

(xi) իրագործի այնպիսի այլ գործառույթներ, որոնք համապատասխանում են սույն Համաձայնագրին։

բ) Կազմակերպության կողմից ղեկավարվող այլ Միություններին հետաքրքրող հարցերի առնչությամբ Վեհաժողովը պետք է իր որոշումները կայացնի Կազմակերպության Համակարգող կոմիտեի կարծիքը լսելուց հետո։

3) ա) Վեհաժողովի ցանկացած անդամ երկիր պետք է ունենա մեկ ձայն։

բ) Վեհաժողովի անդամ երկրների մեկ երկրորդը կազմում է քվորում։

գ) Անկախ «բ» ենթակետի դրույթներից, եթե որևէ նիստի ժամանակ ներկայացված երկրների թիվը մեկ երկրորդից քիչ է, սակայն հավասար է Վեհաժողովի անդամ երկրների մեկ երրորդին կամ ավելի է դրանից, Վեհաժողովը կարող է որոշումներ կայացնել, սակայն, բացառությամբ իր ընթացակարգերին վերաբերող որոշումների, բոլոր այդպիսի որոշումները պետք է ուժի մեջ մտնեն միայն ստորև սահմանված պայմանների կատարման դեպքում։ Միջազգային բյուրոն պետք է նշված որոշումների մասին հաղորդի Վեհաժողովի այն անդամ երկրներին, որոնք ներկայացված չեն եղել, և պետք է հրավիրի նրանց՝ գրավոր ձևով արտահայտելու համար իրենց քվեարկությունը կամ ձեռնպահ լինելը՝ հաղորդագրության օրվանից եռամսյա ժամկետում։ Եթե նշված ժամկետի ավարտին նշված ձևով քվեարկած կամ ձեռնպահ մնացած երկրների թիվը հասնում է քվեարկության համար անհրաժեշտ քանակին, որը չէր բավականացնում տվյալ նստաշրջանում քվորում ունենալու համար, ապա այդպիսի որոշումները պետք է համարվեն ընդունված՝ պայմանով, որ պահանջվող մեծամասնությունը այդպիսով ապահովված է։

դ) Պահպանելով 8 (2) հոդվածի դրույթները՝ Վեհաժողովի որոշումների համար պահանջվում է տրված ձայների երկու երրորդը։

ե) Ձեռնպահ քվեարկությունը հաշվի չի առնվում։

զ) Պատվիրակը կարող է ներկայացնել և քվեարկել միայն մեկ երկրի անունից։

4) ա) Վեհաժողովը պետք է հերթական նիստ գումարի յուրաքանչյուր երկու օրացուցային տարին մեկ անգամ՝ Գլխավոր տնօրենի հրավերով, և, բացառիկ հանգամանքների բացակայության դեպքում, միևնույն ժամանակահատվածում և այն նույն տեղում, որտեղ գտնվում է Կազմակերպության Գլխավոր Վեհաժողովը։

բ) Վեհաժողովի արտահերթ նստաշրջանը պետք է գումարվի Գլխավոր տնօրենի հրավերով, Վեհաժողովի անդամ երկրների մեկ չորրորդի պահանջով։

գ) Յուրաքանչյուր նստաշրջանի օրակարգը պետք է նախապատրաստվի Գլխավոր տնօրենի կողմից։

5) Վեհաժողովը պետք է ընդունի ընթացակարգի իր սեփական կանոնները։

Հոդված 6
Միջազգային բյուրոն

1) ա) Հատուկ միությանը վերաբերող վարչական խնդիրները պետք է իրականացնի Միջազգային բյուրոն։

բ) Մասնավորապես, Միջազգային բյուրոն պետք է նախապատրաստի նիստերը և ապահովի Վեհաժողովի, Փորձագետների կոմիտեի և այնպիսի այլ փորձագետների կոմիտեների և աշխատանքային խմբերի քարտուղարությունը, որոնք կարող են ստեղծված լինել Վեհաժողովի կամ Փորձագետների կոմիտեի կողմից։

գ) Գլխավոր տնօրենը պետք է գործի որպես Հատուկ միության Գլխավոր գործադիր և ներկայացնի Հատուկ միությունը։

2) Գլխավոր տնօրենը և նրա կողմից նշանակված աշխատակազմի ցանկացած անդամ առանց ձայնի իրավունքի պետք է մասնակցեն Վեհաժողովի, Փորձագետների կոմիտեի և այնպիսի այլ փորձագետների կոմիտեների կամ աշխատանքային խմբերի բոլոր նիստերին, որոնք կարող են ստեղծվել Վեհաժողովի կամ Փորձագետների կոմիտեի կողմից։ Գլխավոր տնօրենը կամ նրա կողմից նշանակված աշխատակազմի ցանկացած անդամ պետք է ի պաշտոնե (*ex officio*) հանդիսանա այդ մարմինների քարտուղար։

3) ա) Միջազգային բյուրոն, Վեհաժողովի ցուցումների համաձայն, պետք է նախապատրաստի Համաձայնագրի դրույթների վերանայման խորհրդաժողովները՝ բացառությամբ 5-8-րդ հոդվածների դրույթների։

բ) Միջազգային բյուրոն կարող է վերանայման խորհրդաժողովների նախապատրաստվելու հարցերով խորհրդակցել միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ։

գ) Գլխավոր տնօրենը և նրա կողմից նշանակված անձինք առանց ձայնի իրավունքի պետք է մասնակցեն այդ խորհրդաժողովների քննարկումներին։

4) Միջազգային բյուրոն պետք է կատարի իր վրա դրված ցանկացած այլ խնդիր։

Հոդված 7
Ֆինանսները

1) ա) Հատուկ միությունը պետք է ունենա բյուջե։

բ) Հատուկ միության բյուջեն պետք է ներառի Հատուկ միության բուն եկամուտները և ծախսերը, նրա նվիրատվությունները Միությունների ընդհանուր ծախսերի բյուջե և, երբ կիրառելի է, Կազմակերպության Խորհրդաժողովի բյուջեին մատչելի գումարը։

գ) Այն ծախսերը, որոնք վերաբերում են ոչ միայն բացառապես Հատուկ միությանը, այլև Կազմակերպության կողմից ղեկավարվող մեկ կամ ավելի այլ միությունների, պետք է համարվեն Միությունների համար ընդհանուր ծախսեր։ Հատուկ միության մասնաբաժինն այդպիսի ընդհանուր

ծախսերում պետք է համաչափ լինի այն շահագրգռվածությանը, որը Հատուկ միությունը կարող է ունենալ այդ ծախսերում:

2) Հատուկ միության բյուջեն պետք է հաստատվի՝ պատշաճ ձևով հաշվի առնելով Կազմակերպության կողմից ղեկավարվող այլ Միությունների բյուջեների հետ համակարգման պահանջները:

3) Հատուկ միության բյուջեն պետք է ֆինանսավորվի հետևյալ աղբյուրներից.

(i) Հատուկ միության երկրների անդամավճարներից,

(ii) Հատուկ միությանը վերաբերող՝ Միջազգային բյուրոյի կողմից մատուցված ծառայությունների համար գանձված տուրքերից և վճարներից,

(iii) Միջազգային բյուրոյի՝ Հատուկ միությանը վերաբերող հրապարակումների վաճառքից կամ ռոյալթիներից,

(iv) նվիրատվություններից, կուտակված միջոցներից և լրահատկացումներից,

(v) վարձավճարներից, տոկոսներից և այլ տարբեր եկամուտներից:

4) ա) 3.i կետում նշված իր անդամավճարի չափը որոշելու նպատակով Հատուկ միության անդամ յուրաքանչյուր երկիր պետք է պատկանի այն նույն դասին, որին նա պատկանում է Արդյունաբերական սեփականության պահպանության Փարիզյան միությունում, և իր տարեկան անդամավճարը պետք է մուծի այն միավորների քանակի հիման վրա, որն ամրագրված է տվյալ Միությունում տվյալ դասի համար:

բ) Հատուկ միության յուրաքանչյուր երկրի տարեկան անդամավճարը հավասար է այն գումարին, որը հարաբերվում է բոլոր երկրների կողմից Հատուկ միության բյուջե մուծված անդամավճարների ամբողջ գումարին այնպես, ինչպես նրա միավորների քանակն է հարաբերվում վճարներ մուծող բոլոր երկրների միավորների ընդհանուր քանակին:

գ) Անդամավճարները ենթակա են մուծման յուրաքանչյուր տարվա հունվարի մեկին:

դ) Անդամավճարի պարտք ունեցող երկիրը կարող է զրկվել Հատուկ միության ցանկացած մարմնում քվեարկելու իր իրավունքից, եթե նրա պարտքի չափը հավասար է նախորդ երկու լրիվ տարիների համար մուծման ենթակա անդամավճարի չափին կամ գերազանցում է այն: Այնուամենայնիվ, Հատուկ միության ցանկացած մարմին կարող է այդ երկրին թույլատրել օգտվել այդպիսի մարմնում քվեարկելու իր իրավունքից, եթե և քանի դեռ նա ընդունում է, որ վճարման ուշացումը պայմանավորված է բացառիկ և անխուսափելի հանգամանքներով:

ե) Եթե բյուջեն ընդունված չէ մինչև նոր ֆինանսական տարվա սկիզբը, այն պետք է լինի նախորդ տարվա բյուջեի նույն մակարդակի վրա, ինչպես նախատեսված է ֆինանսական կանոնակարգերով:

5) Հատուկ միության անունից Միջազգային բյուրոյի կողմից մատուցված ծառայությունների համար գանձվող տուրքերի և վճարների չափը պետք է սահմանվի Գլխավոր տնօրենի կողմից, որն այդ մասին զեկուցում է Վեհաժողովին:

6) ա) Հատուկ միությունն ունի շրջանառու միջոցների ֆոնդ, որը պետք է կազմվի Հատուկ միության յուրաքանչյուր երկրի կողմից վճարված միանվագ անդամավճարից: Եթե այդ ֆոնդը դառն ոչ բավարար, Վեհաժողովը պետք է որոշում կայացնի այն մեծացնելու մասին:

բ) Յուրաքանչյուր երկրի նախնական անդամավճարի չափը նշված է ֆոնդում, կամ նրա մասնակցությունը դրա ավելացմանը համամասնական է տվյալ երկրի վճարին, այն տարվա համար, երբ ստեղծվել է ֆոնդը, կամ դրա ավելացման մասին որոշում է ընդունվել:

գ) Վճարի չափը և վճարման ժամկետները պետք է հաստատվեն Վեհաժողովի կողմից՝ Գլխավոր տնօրենի առաջարկությամբ և Կազմակերպության համակարգող կոմիտեի կարծիքը լսելուց հետո:

7) ա) Կենտրոնական գրասենյակի մասին համաձայնագրում, որը կնքված է այն երկրի հետ, որի տարածքում գտնվում է Կազմակերպության Կենտրոնական գրասենյակը, նախատեսվում է, որ այն դեպքում, երբ շրջանառու միջոցների ֆոնդը դառնում է ոչ բավարար, տվյալ երկիրը տրամադրում է կանխավճարներ: Այդ կանխավճարների գումարը և տրամադրման պայմանները պետք է յուրաքանչյուր դեպքում հանդիսանան տվյալ երկրի և Կազմակերպության միջև առանձին համաձայնագրի առարկա:

բ) «ա» ենթակետում նշված երկիրը և Կազմակերպությունը պետք է իրավունք ունենան գրավոր ծանուցմամբ չեղյալ հայտարարելու կանխավճար տրամադրելու մասին պարտավորությունը: Չեղյալ հայտարարումը պետք է ուժի մեջ մտնի ծանուցման տարվա ավարտից երեք տարի անց:

8) ֆինանսների աուդիտը պետք է իրականացվի Հատուկ միության մեկ կամ մի քանի երկրների կողմից կամ արտաքին աուդիտորի կողմից, ինչպես սահմանված է ֆինանսական կանոնակարգերում: Նրանք, իրենց համաձայնությամբ, պետք է նշանակվեն Վեհաժողովի կողմից:

Հոդված 8
5-8-րդ հոդվածների փոփոխությունները

1) 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներում և սույն հոդվածում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունները կարող են նախաձեռնվել Հատուկ միության ցանկացած երկրի կամ Գլխավոր տնօրենի կողմից: Այդ առաջարկությունները Գլխավոր տնօրենը պետք է հաղորդի Հատուկ միության երկրներին դրանք Վեհաժողովում քննարկման դնելուց առնվազն վեց ամիս առաջ:

2) 1-ին կետում նշված հոդվածների փոփոխությունները պետք է ընդունվեն Վեհաժողովի կողմից: Ընդունման համար պահանջվում է տրված ձայների երեք քառորդը, սակայն 5-րդ հոդվածի և սույն կետի ցանկացած փոփոխություն պահանջում է տրված ձայների չորս հինգերորդը:

3) 1-ին կետում նշված հոդվածների ցանկացած փոփոխություն պետք է ուժի մեջ մտնի մեկ ամիս անց այն բանից հետո, երբ, այդ փոփոխությունն ընդունելու մասին յուրաքանչյուր երկրի սահմանադրական ընթացակարգին համապատասխան, գրավոր ծանուցումները Գլխավոր տնօրենի կողմից ստացվել են փոփոխությունն ընդունելու պահին՝ Հատուկ միության անդամ հանդիսացող երկրների երեք քառորդի կողմից: Վերը նշված հոդվածների՝ այդ ձևով ընդունված ցանկացած փոփոխություն պետք է պարտադիր լինի այդ փոփոխությունների ընդունման պահին Հատուկ միության անդամ բոլոր երկրների համար կամ այն երկրների համար, որոնք անդամ են դառնում դրանից հետո՝ պայմանով, որ Հատուկ միության երկրների ֆինանսական պարտավորություններն ավելացնող ցանկացած փոփոխություն պետք է պարտադիր լինի միայն այն երկրների համար, որոնք ծանուցում են այդ փոփոխությունների ընդունման մասին:

Հոդված 9
Վավերացում և միացում
Ուժի մեջ մտնելը

1) Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան Կոնվենցիայի անդամ ցանկացած երկիր, որը ստորագրել է Համաձայնագիրը, կարող է վավերացնել այն և, եթե չի ստորագրել այն, կարող է միանալ դրան:

2) Վավերագրերը և միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

3) ա) Վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնած առաջին հինգ երկրների համար սույն Համաձայնագիրը պետք է ուժի մեջ մտնի վերջին այդպիսի փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս հետո:

բ) Ցանկացած այլ երկրի համար սույն Համաձայնագիրը պետք է ուժի մեջ մտնի Գլխավոր տնօրենի կողմից նրա վավերագրի կամ կամ միանալու մասին ծանուցումը ստանալուց երեք ամիս հետո, եթե ավելի ուշ ժամկետ նշված չէ վավերագրում կամ միանալու մասին փաստաթղթում: Վերջին դեպքում սույն Համաձայնագիրը տվյալ երկրի համար պետք է ուժի մեջ մտնի նշված ժամկետում:

4) Վավերացումը կամ միանալը ինքնըստինքյան պետք է ենթադրեն սույն Համաձայնագրի բոլոր դրույթների ընդունում և դրա ընձեռած բոլոր առավելությունների ընդունում:

Հոդված 10
Համաձայնագրի գործողությունը և տևողությունը

Սույն Համաձայնագիրը պետք է ունենա նույն ուժն ու տևողությունը, ինչ Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան Կոնվենցիան:

Հոդված 11
1-4-րդ և 9-15-րդ հոդվածների վերանայումը

1) Սույն Համաձայնագրի 1-4-րդ և 9-15-րդ հոդվածները կարող են ներկայացվել վերանայման՝ նախընտրելի փոփոխությունները կատարելու նպատակով:

2) Յուրաքանչյուր վերանայում պետք է քննարկվի խորհրդաժողովի ժամանակ, որը տեղի է ունենում Հատուկ միության երկրների պատվիրակների մասնակցությամբ:

Հոդված 12
Չեղյալ հայտարարումը

1) Ցանկացած երկիր կարող է չեղյալ հայտարարել սույն Համաձայնագիրը Գլխավոր տնօրենին ուղարկված ծանուցմամբ: Այդպիսի չեղյալ հայտարարումը պետք է ազդի միայն նման հայտարարություն անող երկրի վրա: Համաձայնագիրը լիովին ուժի մեջ է մնում և գործում է Հատուկ միության մյուս երկրների նկատմամբ:

2) Չեղյալ հայտարարումը պետք է ուժի մեջ մտնի ծանուցումը Գլխավոր տնօրենի ստանալուց մեկ տարի հետո:

3) Սույն հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարելու իրավունքը չպետք է կիրառվի որևէ երկրի կողմից, մինչև նրա՝ Հատուկ միության անդամ դառնալու հինգ տարին լրանալը:

Հոդված 13
Տարածքները

Սույն Համաձայնագրի նկատմամբ պետք է կիրառվեն Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան Կոնվենցիայի 24-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 14
Ստորագրումը, լեզուները, ծանուցումները

1) ա) Սույն Համաձայնագիրը պետք է ստորագրվի մեկ օրինակով, անգլերենով կամ ֆրանսերենով. ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարապես վավերական են և պետք է ի պահ հանձնվեն Շվեյցարիայի Կառավարությանը:

բ) Սույն Համաձայնագիրը պետք է ստորագրման համար բաց լինի Բեռնում՝ մինչև 1969թ. հունիսի 30-ը:

2) Պաշտոնական տեքստերը պետք է հաստատվեն Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո, այնպիսի այլ լեզուներով, որոնք կարող է սահմանել Վեհաժողովը:

3) Գլխավոր տնօրենը սույն Համաձայնագրի ստորագրված տեքստի՝ Շվեյցարիայի Կառավարության կողմից հաստատված երկու պատճենները պետք է փոխանցի այն ստորագրած երկրների Կառավարություններին և, ըստ հարցման, ցանկացած այլ երկրի Կառավարության:

4) Գլխավոր տնօրենը պետք է սույն Համաձայնագիրը գրանցի Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում:

5) Գլխավոր տնօրենը պետք է Հատուկ միության բոլոր երկրների կառավարություններին ծանուցի Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ժամկետի, ստորագրումների, վավերագրերի կամ միանալու փաստաթղթերն ի պահ հանձնելու, սույն Համաձայնագրի փոփոխություններն ընդունելու և այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի և չեղյալ հայտարարելու ծանուցումների մասին:

Հոդված 15
Անցումային դրույթներ

Մինչև առաջին Գլխավոր տնօրենի կողմից իր պաշտոնի ստանձնումը, սույն Համաձայնագրում Կազմակերպության Միջազգային բյուրոյին կամ Գլխավոր տնօրենին արված հղումները պետք է համարվեն հղումներ՝ կատարված Մտավոր սեփականության պաշտպանության միավորված Միջազգային բյուրոյին (BIRPI) կամ նրա Տնօրենին: